

# ՀԵՉԱԿ

## Մ Տ Ա Թ Ի Յ Ի Ք

Հայերս առհասարակ ունենք մի թշուառ յատկութիւն, որ մանաւանդ վերջին յեղափոխական տարիներում երևան է գալիս աւելի յամառութեամբ: Այդ յատկութիւնն է— մեր վսիսը համարձակ մտքից, մեր երկիւղը յանդուգն ձեռնարկից, մեր կամքի թուլութիւնը հասարակական գործերում: Այդ յատկութիւնը մեծ դեր է խաղում մեր մէջ մանաւանդ այնպիսի ժամանակներում, այնպիսի պարագաներում, երբ մենք կանգնած ենք լինում որ և է դժուար գործի առջև կամ երբ հարուած ենք ստանում մեր թշնամիից: Այդ ժամանակ մենք դառնում ենք անհամարձակ, վախկոտ, կորցնում ենք մեր ամբողջ ինքնավստահութիւնը, սկսում ենք ցաւել մեր արածի վրայ, հեշտութեամբ հիասթափվում ենք և նոյն իսկ այն գործն, այն դադարը, որ ընդհանուրի տեսակէտից իսկ կարեւոր է ու անհրաժեշտ, մեր աչքին կորցնում են իրանց հմայքը, իրանց զօրութիւնը: Մենք անբարոյականանում ենք: Այդ պարագաներում էլ աւելի լկտիութեամբ են առաջ գալիս մեր ներքին հակառակութիւնները, աւելի ծաւալ են ստանում իրար դէմ լարված դաւերը, ապականութիւնը ներս է մտնում ամեն խաւերում: Եւ այդ ժամանակ այն հասարակական գործիչը, որ հասարակական կուռի մարդ է, որի մէջ իր գաղափարի, իր գործի համար մաքառելու բարոյական ու մտաւոր զօրութիւնը կարող է նրան ուրանալ, կորցնում է իր պաղարիւնութիւնն, իր շրջահայեցութիւնը, նրան թւում է, որ իր օտի տակ հողը խախտւում է: Այդպիսի գործիչը հասարակական մարտընչող է:

Այդպէս անբարոյականացած ու լքված հասարակութիւնը սկսում է վախկոտ աչքերով դիտել աջ ու ձախ, թէ արդեօք չը կայ մէկ այնպիսի երևոյթ: մէկ այնպիսի պարագայ, որ նա կարողանար իր վճարից դէն շարունակ հասարակական բեռը և, ինչպէս ասում են, «ձեռքերը խուր» ու մի կողմ քաշվել: Եւ ահա երևան է գալիս մեկ-ինչ-որ օտար հայասէր ընկերութիւն, անմիջապէս ձայներ են լսվում հայերի մէջ, թէ սպասենք, այսուհետեւ նա, այդ ընկերութիւնը, կանէ ամեն բան: Երևան է գալիս մի եւրոպական յանձնախումբ, հայերի շրթներից դուրս են պրծնում բացականչութիւն-

ներ և ասում են, թէ սպասենք, ամեն բան յանձնախումբը կանէ: Որ և է եւրոպական տէրութիւն հայերին ժպտալու մի թեթեւ պատրաստութիւն է ցոյց տալիս, դարձեալ մտածում են այս վերջիններս, թէ սպասենք, այդ տէրութիւնը մեր դատի լուծման համար աշխատում է: Մի խօսքով, հայ հասարակութիւնը, մի տեսակ անձոնի անհամբերութեամբ, իր չորս կողմն է դիտում և ճգնում բռնել այն երևոյթի ու պարագայի պոչից, որ նրան հնարաւորութիւն կը տայ խուսափել իր հասարակական ու ազգային պարտականութիւններից ու պատասխանատւութիւնից: Կա ճգնում է գտնել մէկ աժան ու դիրին միջոց իր խիղճը խաբելու իր ունեցած ազգային պարտականութիւնների նկատմամբ, թէկուզ էլ դրեթէ վստահ լինէր, որ այդ օտար ընկերութիւնների, յանձնախմբերի ու տէրութիւնների վրայ այնքան էլ յոյս դնել չէ կարելի: Նրանք ամեն բան անում են միայն իրանց շահի տեսակէտից և յարատեւ չեն: Եւ այդպիսով հայ հասարակութիւնն իր խիղճի առեւտուրն է անում: Եւ մի քանի հարուստներ, մի քանի փառասէրներ առաջ են ընկնում այդպիսի ժամանակ հասարակական ասպարէզում, ոմանք վայելելով իրանց փողով, որ տալիս են օտարներին, ոմանք՝ ուշացած պոռոտախօսութեամբ... Վժան առեւտուր, դիրին միջոց...

Մինչդեռ նոյն այդ հասարակութիւնը կենդանութեան նշոյլ անգամ չէ ցոյց տալիս այնպիսի պարագաներում, երբ ազգային ասպարէզում յեղափոխականներն առաջնորդելով ժողովրդին՝ ազգային դատն են պաշտպանում իրանց սրտով, մտքով, արիւնով ու կեանքով: Այդ հասարակութիւնը ուշադրութիւն չէ դարձնում այն հանգամանքի վրայ, թէ ինչ է պատճառը, որ այսօր եւրոպայում հայկական խնդիրն օրւայ հարց է, տէրութիւններին զբաղեցնում է, յանձնախմբերի կազմութեան պահանջն առաջացնում, գրողում, յուզում եւրոպական հասարակութիւններին: Հայ հասարակութիւնը չէ ուզում մինչեւ իսկ լսել, որ այդ բոլորը ձեռք է բերվել իր հայրենիքի հաղարաւոր հարազատ որդիների եւ անձնուրաց յեղափոխական մարտնչողների անընկճելի, յարատեւ, եօթ ութ ամբողջ ծանր գործնեութեամբ, անսահման զրկանքների տանջանքների ու առատ արցունքի գնով, բանտերի, աքսորավայրերի, մահաւանդ ու կախաղանի միջոցով: Եթէ քիչ աւելի խնդես այդ հանգամանքների վրայ, հայ հասարակու-

Թեան միջից կը լսես ձայներ, թէ այդ բոլորը մինչեւ իսկ վնասեցին հայկական դատին և եթէ տեսնէ աւելի կը վնասեն: Հանձարեղ գիւտ, արդարեւ, փախուստ տալու համար արիւնալի գործից և նրա վերաբերութեամբ ամենամի հայի ունեցած սրբազան պարտականութիւններէն... Եւ այդ խուսափութեան խօսքն ասելով հայ հարուստը կը շարունակէ իր գրամը տալ օտարներին կամ մեծախօս հայերին և մեծախօսն էլ կը շարունակէ իր արհեստը... իր բոյնից դուրս գալով ասպարէզ ճոռոմաբանութեամբ պարագլխու համար հէնց այն ժամանակ, երբ հայկական դատը փայլեցնող հաղարաւոր յեղափոխականներից շատերի դիակները թաւալված են արիւնալի դաշտում և շատերը թաղվում են բանտերի խորերում...

Այսօր մենք դարձեալ նախադգուշացնում ենք. թող հայ հասարակութիւնը շտապէ ամենից առաջ օգնել այն մարտնչողներին, որ իրանց վրայ առած հայութեան պատմական մեծ դատը, անվհատ ու տոկուն կերպով դիմում են դէպի յաղթանակ: Թող նա իր ուշքն ու միտքը ամենից առաջ դարձնէ հարադատ եղբայրների վրայ, որ մոռացած իրանց կեանքը, գործում և մեռնում են հայ ժողովրդի, հայ հասարակութեան կեանքի համար, նոյն հասարակութեան, որ այսօր այնքան ապերախտ է դէպի նրանց

Նախադգուշացնում ենք... Մտածեցէք:

## Թ Դ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

### ՆԱԽԱԿՆԵՐ ԹԻՐԻՔԻՆՅՈՅ

Կ. Պօլիս, 28 փետրվար 95.

Իր անկման վիճին բերանը դիտող տգէտ կառավարութիւնը, իր գոյութիւնը բիւզ մ'ալ երկարելու համար, չի քաշուի ամենէն անտեղի և ծիծաղելի միջոցներու դիմելէ: Այս օրեր քանի մը ձերբակալութիւններ կատարեց Հէյպէլի և Քընալը կղզիներուն և Պօլսոյ մէջ, բայց բացէ ի բաց հասկնալով իր լրտեսներու լարած անտեղի որդալթը հայերու դէմ, շատերը թողուց և բախդախնդի մատնիչները իբր թէ, ինչու, պիտի պատժուին:

Իշմիրեան պատրիարքի յանդուգն ու համարձակ ընթացքը շուարեցուցեր է կառավարութիւնը և դեսպանները: Ժողովուրդը իր խանգաւառ ցոյցերու մէջ կը դիմաւորէ միշտ իր սիրելի պատրիարքը և անհամար բազմութեամբ կը խնուր անոր քաջոցները լսելու:

Այժմ՝ րամազան է, թիւրքերու կեղծ թիրեաքիութիւնը բռնած է որով կաշխատին աւելի յագուրդ տալ իրենց բարբարոսութիւններին. բանտի վիճակը անտանելի է, Սիմօն պէյի երկու տէնօրները դարձեալ ծեծ կերած են՝ խոստովանելու համար թէ իրենք լաւ կուտեն ու կը խմեն և հանգիստ կապրին:

Սերաստիա, 16-յունվար 95.

Սերաստիոյ Տ ու Ղ Լ ա ս ար գիւղէն 11 հայ, նոյն գիւղացի Յարութիւն և Այրասի վատերու մատնութեամբ, անցեալ տարւոյ յունվար ամսին ձերբակալուեցան և բանտարկուեցան, որ եւ հարկ կը համարիմ հաղորդել. 1) Տ. Ա ս ա տ ու Ր քահանայ Կէտեան, 2) Յ ո վ հ ա ն ն է ս Պ ա ս մ ա ճ ե ա ն, 3) Ն ը շ ա ն 2 ա Ր ա զ ճ ե ա ն և 4) Գ ա լ ու ս տ Ս Ր ա պ ե ա ն — 15-ական տարուայ բերդարգելութեան դատապարտուեցան. 5) Կ ա Ր ա պ ե տ Ք է օ ս ե ա ն, 6) Գ Ր ի գ ո Ր Ք է օ ս ե ա ն, 7) Ս ա Ր գ ի ս Ե Ր ե մ ե ա ն և 8) Ս ա հ ա կ Լ է Փ ե ա ն — 9-ական տարուայ դատապարտուեցան. 9) Ա լ ա դ Պ ա չ ի կ ե ա ն, 10) Կ ի ը ե ղ Թ ո Ր օ ս ե ա ն և 11) Թ ո Ր օ ս Ե Ր ե մ ե ա ն — 4-ական տարուան դատապարտուեցան:

Այս դատապարտութեան առթիւ աւելորդ չեմ համարիր պատմել, թէ ինչ հանգամանքներու եւ ինչ յանցանքներու համար ձերբակալուեցան և այդքան խիստ դատապարտութիւն ստացան: Տեղացի մի քանի մոտանիչներու թելադրութեամբ՝ կառավարութիւնը հալածանքի առիթ գտնելով, կուսակալը 30 հեծեալօր հանելով կը շրջէ Տուզլուսար գիւղին վրայ, որ անոնք առաւօտը կանուխ եկեղեցին կը պաշարեն: Այնտեղ եկեղեցիի դռնէն հայերու ելած ատեն մէկ-մէկ խմենու վրան կը խուղարկեն, բայց բան մը չը գտնելով, անոնց տունները կերթան խուղարկութեան եւ կը գտնեն քանի մը հին զէնքեր: Այդ առիթ բռնելով լրտեսներու մատնանիշ ըրած անձերու վրայ կիյնան եւ հայհոյանքով ծեծով կը ձերբակալեն եւ շատ մը տանջանքներու կենթարկեն: Մանաւանդ Գալուստ Սրապեանը շատ կը տանջեն, ոտքերէն կը կախեն զլուխն ի վար, սիւնէ կը կապեն եւ հարուածներ կուտան տաքցուցած երկաթով, գլխուն տաք եւ պաղ ջուր կը լեցնեն, ձեռք ու ոտք կը կապեն եւ սանդուխներէն վար կը գլորեն: Այս բոլորին պատճառն այն էր, որ արիւնածարա կառավարութիւնը կը ջանար անոնց չը գիտցածը խոստովանցնել տալ:

Այսօր Սերաստիոյ նահանգը ղրկուած են 10 յատուկ զինւորական պատուիրակներ, իբրեւ հսկող, կառավարութեան կողմէ: Ազոնցմէ հինգը թիւրք են եւ հինգը հայ վատերէն: Անոնց ուտելիքը, խմելիքը, բնակարանը եւ ձիերնուն ուտելիքը ամենը պիտի վճարեն նահանգիս հոյերը եւ ամսական յատուկ վճար աւորողուած է անոնց, որ դարձեալ հոյերս պիտի տանք:

Ի թէ երկրէս հայ մը ուզենայ ոչ միայն ուրիշ երկիր կամ ուրիշ նահանգ երթալ, այլ թէ եթէ երթալու ըլլայ գիւղ մը, քաղաք մը, որչափ ալ այդ մօտ ըլլայ, կրկին պէտք է դիմել եւ ոստիկանաւանէն յատուկ հրամանագիր առնել: Այսպէս չընողը կը ձերբակալուի:

Սերաստիոյ առաջնորդ Պետրոս եպիսկոպոսէն տեղային կուսակալ Նալիլ պէյ խստիւ կը պահանջէ, որ իր եւ հայերու ստորագրութեամբ երախտագրութեան ուղերձ մը պատրաստէ սուլթանին տալու համար: Առաջնորդը համարձակօրէն մերժեց է...

ՎԱՍ.

Երզնկայ, 10 փետրվար 95.

Հայկական խնդրոյ մասին ամենէն աւելի փնտա-  
ուողներէն մին ալ Արմատանցիները եղան. կարելի է ը-  
սել, այսօր երեք ու կէս տարիէ ի վեր 50-է աւելի  
անձինք Երզնկայի բանտին մէջ կը հեծեն, որոնցմէ  
7 անձինք մեռան: 1893-ի ծանօթ թիւրքի մը սպա-  
նութիւնը մեծ աղէտը մը եղաւ Արմատանցիին համար.  
ամիսներով ձիաւոր զօրքերէ պաշտօնաւ մնաց ամբողջ  
գիւղը, նա մանաւանդ կալերու ժամանակ: 50-է աւելի  
երկաւսարդներ երեք ու կէս տարի է կը հեծէին բան-  
տին խորը, առանց ո եւ է վճռի, իսկ այսօր առանց ա-  
պացուցեալ յանցանքի մը, առանց բացառութեան կը  
դատաւարտուին անխնայ, դաւաճան հայերու եւ ռուս-  
կալ թուրքերու երեւակայական վկայութիւններով: Ար-  
դարասե՞ք սուլթանի արդարադատ դատաւորներն արդէն ե-  
րեք տարիէ ի վեր բանտարկեալքը ազատ թողելու յուսատու  
ընելէ, եւ քանի մը տասնեակ հարկւր ոսկիներ կուլ տալէ  
վերջ, այսօր ալ առանց բացառութեան անոնց դատա-  
ւարտելը, տարակոյս չը վերցնել, թէ կառավարութեան  
նպատակն է արմատացնել մեղակցել թէ գոյրով թէ  
մարդով: Չենք գիտեր օրինաց ո՞ր յօդուածի տրամադր-  
ութեամբ, բանտարկեալներէ 23 անձինք՝ մահուան,  
4 անձինք՝ ցկեանս բերդարգելութեան եւ մնացածներն  
ալ 3—5 տարուան բանտարկութեան դատաւարտուեցան:

Միմիայն մէկ անձ բաղդ կունենայ ազատ արձակ-  
ուիլ, այն ալ 80 տարեկան ծերունի մը, որուն արդէն  
առջի բռնութեամբ օրէն կառավարիչը կըսէ. «դեռ, վկայէ  
թէ ասոնք ապստամբ են, աղատ ես այս օրէն»<sup>1</sup>. իսկ  
ծերը յսուտ վկայութիւն չեմ կրնար ընել<sup>2</sup> ըսելուն  
համար պարտ էր երեք ու կէս տարի բանտը պառ-  
կիլ եւ վերջը ի՞նչ քերու լոյսը կորսնցնելուն համար  
բաղդ կունենայ բանտէն ազատելու շնորհը վայելել մի-  
անգամայն պարտաւոր ըլլալով աղօթել սուլթանի կենացը:

Բայց ծանր չեն այս շղթաներ, այլ միայն կը ցա-  
ւինք, որ բանտարկեալները կապաշխարեն, առանց սակայն  
մեղանչած ըլլալու: Իբր յեղափոխական, եթէ մի նշա-  
նաւոր փնտս հասուցած ըլլային՝ հիմակ երջանիկ պիտի  
սեպէին ինքզինքնին, իսկ հիմակ դատաւարտութեամբ են  
ինչո՞ւ. որովհետեւ հայ են...

Թող ինքն Ալլահը պահէ, պահպանէ մեր առա-  
տադութ սուլթանը, որ բանտարկեալներու բացակայու-  
թեանը գիւղին ամայի վիճակը ի նկատի առնելով՝ խոր-  
հած է գիւղին վրայ հսկող պաշտօնեաներ ղնել, որ-  
պէսզի դուրսի գայլեր անմարդաբնակ գիւղ գտնելով  
չը գան անմեղ գառնուկներ յափշտակելու: Ի լոյս կի-  
մանանք, թէ այդ պաշտօնեաներու (որոնք թուով 4 են)  
ամսականներ գիւղացի թշուառ աղքատ հայ ժողո-  
վորդէն բռնի կը հաւաքէ, իբր թէ փորձանք պակաս  
եղած ըլլաւ Արմատանցիներու գլխին: Երեք տարիէ ի վեր  
է արդէն Արմատանցի ամեն ինչ ծախեց՝ իր զաւակը,  
եղբայրը, թոռը, ամուսինը փրկելու համար բանտէն.  
կուղներ գիտել տալ, թէ 150 դահի՞ ամսականը, որ  
այդ պաշտօնէից ամեն մէկին յատկացուած է, շատ քիչ  
է եւ շատ անգամ բնաւ չը վճարուի:

Արմատանցի 50-է աւելի երկաւսարդաց դատաւար-  
տուելուն մեծ ոյժ տուած է գիւղին աւագ երէց տ-

Յակոբի եւ աղաներու մի տեղեկագիրը, թէ «աղոնք  
գիւղին սրիկաներն են, պէտք են պատժուին»<sup>3</sup>. Գիւղին  
միւս քահանան ալ, որ բանտն է, ո եւ է ջանք չէ եւր-  
նայած՝ ուրիշներ ամբաստանելով ինքը ազատ արձակ-  
ութեամբ համար՝ աջակցութեամբ Պոյաճեան կոչուած վա-  
սին: Մեր կղերականները դեռ յարգանք կսպասեն մեզ-  
նէ: Տեղապահ Հմայեակ եպիսկոպոսն ալ, իբր թէ պի-  
տի ազատէ հայերը բանտէն, Պոլիս անոնց հայրենա-  
կիցներէն 50-ի չափ ոսկիներ շնորհած է եւ իր խօս-  
քով յաջողած է կայսերական ներման արժանացնել:  
Երեւի թէ այդ ներող կայսրն ու կաշառակուր եպիս-  
կոպոսը համախոհներ են ժողովուրդը կեղծելու համար:

Այս կողմերու յայտնի բժիշկ Կարապետ փա-  
շայեան, իբր յեղափոխական դեկ. 24-ին մահուան  
դատաւարտուեցաւ:

ՍՍՏ.

Ամսիա, 23 դեկտեմբեր 94.

Նախորդ յօդուածով իմացուցած էի, թէ կառա-  
ւարութիւնը ինչ ստոր միջոցներ ի գործ դրաւ, բռնելու  
համար մի այնպիսի դիրք, որով կարողանար հայ ժողո-  
վորդը ղնել ծայրահեղ ճնշման տակ: Բայց աղբի պար-  
տաճանաւ առաջնորդներ ի դերեւ հանեցին կառա-  
ւարութեան բոլոր մեքենայութիւնները: Հուսկ ուրեմն  
մասամբ յաջողութիւն գտնել կարճեց, բանտարկութեան  
եւ սպառնալից տակ ցրուեց հին բաղաբական ժողովը  
եւ իր ընտրութեամբ հաստատեց մէկ ուրիշը: Այս ժո-  
ղովի աջակցութեամբ կարողացաւ բռնի կերպով ստո-  
րագրութիւն ժողովել տեղւոյս հայերէն, որ յեղափոխա-  
կաններու ով լինելն իմաց տան կառավարութեան: Ար-  
գիւղեցաւ նաեւ դրացիական յարաբերութիւնը. անշուշտ  
կառավարութիւնը այս ճնշումը ի գործ ղնելով կար-  
կառավարութեանց կապը խզելով պատճառ կըլ-  
լայ յեղափոխականներու հաղորդակցութիւններու ընդ-  
հատման: Ստորագրութիւնը ժողովելէ հաջիւ 2 օր յե-  
տոյ սկսաւ ձերբակալութեան. 1-2 օրուան մէջ արդէն  
20 հայ ձերբակալած եւ բանտարկած էին: Այդ պա-  
հուն Մարդուանէ հոս եկած էր մատնիչ քիթեմիտճեանը,  
որ իր ըրած մատնութեամբ հանրածանօթ է: Դեկ. 16-  
ին ասոր ուղղութեամբ յեղափոխականաց կողմանէ չըն-  
չակեան կուսակցութեան Մասնաճիւղի կնիքով սպառ-  
նական մի խիստ գրութիւն, ուր կը պատուիրէին վատին  
զԳԴԶ ԸԼԸՄԸ:

Այրք վատը այս գրութիւնը կը կարգայ երկիւղէն  
անմիջապէս կը հասցնէ իր սիրելի Պէքիւր փաշային:  
Այս վերջինը տեսնելով պարունակութիւնը շուտ մը կը  
հրամայէ որ բաղ. ժողովը իրեն ներկայանայ: Ժողովը  
ներկայացաւ. գրութիւնը, որ Պէքիւրի առջեւ կեցած էր  
նա վերջին ծայր բարկութեամբ գոչեցցոյց տալով ներ-  
կայից. «ի՞նչ է այս. դեռ երկար պիտի տեւէ, չըլլար այս-  
պէս: Կամ իբր ապստամբ կատորագրութիւն եւ կամ այդ  
ֆէսատները յանձնեցէք ինձ: Չեղ երեք օր պայմանա-  
ժամ. դացէք խորհեցէք»<sup>4</sup>: Պէքիւրը իր բարկութենէն ինչ  
ընելը չէր գիտեր. կանչելով իր բով քիթեմիտճեանը

պատուիրեց որ շուտ մը երթայ եւ ինք պահպանութեան համար ոստիկան պիտի տայ: Դեկ. 17 ի երեկոյին ոստիկանով մը եւ երկու ընկերով վատը մեկնեցաւ: Իսկ Պէքիրը քանի մը ատենէ ի վեր սկսած ձերբակալութիւնները կը շարունակէր եւ որոնց վրայ որ քիչ մը կ'սկսած կար կը բռնէր եւ մաքուր հանդերձ ունեցող ով որ տեսնէր կը դնէր բանտ: Գեկտ. 10-էն մինչեւ 13 ը, այսինքն երեք օրուան մէջ բանտարկեցող թիւը հասաւ 120 ի: Քանի մը ամիս առաջ, Ըմասիայի շատ բանտարկեալները ազատեցին Եւրօպային ցոյց տալու համար թէ թիւրքն արդարադատ է. իսկ այժմ արձակուածներուն գրեթէ կրկինը բանտարկեցին, եւ անամօթ Պէքիրը կը պարծենայ, թէ բոլոր ֆէսատները բանտարկեց: Բայց տեսնենք թէ իր պարծանքը քանի օր տեւեց: Դեկ. 22 թիւ տեղւոյն շնչակեան Մասնաճիւղի կնիքով Պէքիր փաշայի ձեռքն հասաւ գրութիւն մը, որոյ թարգմանութիւնն է հետեւեալը:

«Պէքիր փաշա.

«Իմացանք քանիցս, թէ պարծենցած ես իբր թէ վերջ տուիր տեղւոյս յեղափոխական շարժման, բանտարկելով բազմաթիւ հայեր:

«Ամեն խարդախութիւն ընել եւ ճշմարտութիւնը խափանել բու պաշտօնդ է քրդէն: Բայց զիտցած լինիս, թէ չէ դու, այլ ամբողջ թիւրք կառավարութիւնը անկարող է զսպել մեր յեղափոխութիւնը... քո ձերբակալած հայերն անմեղներ են, իսկ մեր Յեղափոխական ընկերութիւնը կայուն է միշտ եւ բեղ ցուցնելու համար մեր գոյութիւնն ամենափոքր նշանով մը, կիմացունենք որ ահա այս գիշեր բազմաթիւ յայտարարութիւն ցրուելու վրայ ենք: Բեղ ժամ առաջ լուր կուտանք որ բուն ցըրուողները ձերբակալես եթէ կրնաս եւ որ քու վարձքով բռնած վատերու խօսքին անսալով անմեղներ չը բանտես, որով մենք ալ պիտի ստիպուինք այդ վատերուն դէմ գործել: Ար զգուշացունենք:»

«Շնչակեանները ըսին իրենց խօսքը եւ կատարեցին:

«Նոյն գիշերը ցրուած էր թուրքերէն լեզուաւ յայտարարութեան մը բազմաթիւ օրինակներ, որոյ թարգմանութիւնն է հետեւեալը.

«Իսլամ հայրենակիցներ,

«Իհաղաքակրթութիւնը երկրներու մէջ, ուր խտրութիւն չը կայ կրօնի եւ ազգի, կայ ազատութիւն մասնաւոր, խղճի, խօսքի. բայց մեր հայրենիքը զոկուած լինելով այդ ամենակարեւոր ազատութիւններէ, մեր պարտքը կը համարենք ժամ առաջ ձեռք իմաց տալ ինչ որ կարելի է ինչ որ իրական է: Թուրք կառավարութեան ներկայ քայքայուած ու սնանկ վիճակը կը տանէ երկիրը դէպի կործանում: Ժողովրդի վրայ ծանրաբեռնեալ անթիւ ու խոշոր տուրքերը եւ անոր տնտեսական անկեալ վիճակը կը տանի, եւ տարած է արդէն, դէպի ժողովրդի նիւթական եւ բարոյական անկում, քայքայում եւ թշուառութիւն: Կառավարութեան պաշտօնեաներու հարբեցող, շնացող, անիրաւ լինելն, խաղախ, կաշուաւոր եւ անարդար վարչութիւններն եւ ժողովրդի ներկայ այդ դառն վիճակը երկիրը կը տանի դէպի անկում: Ահա յիշեալ ճշմարտութեանց ոչ մի թուրքացի կարող չէ դէմ խօսել: Այս բոլորը տեսնելով հայրենիքի մի հարազատ զաւակ չէ կարող անտարբեր մը-

նալ: Իսլամներ, մինչեւ երբ մնաք այդ ստրկութեան տակ լուրթեամբ, եթէ չը գործէք հայրենիքի ազատութեան համար. մօտ օրերէն պիտի տեսնէք հայրենիքը աւերած եւ պատառ-պատառ եղած: Իսկ մենք, հայերս, երբ այսչափ նեղութիւններ կը քաշենք ձեռ աչաց առջեւ հայրենիքի փրկութեան համար, մեզ կը տրուի «խառ-վարար» անունը. երբ կուտանք զոհեր բանտի մէջ, արտօրապարտութեան մէջ, կախաղանի վրայ հայրենեաց ազատութեան համար, մեզ կը տրուի «աւաղակ», գող» անունը... Բայց ինչ անուն ալ որ տան մեզ — ոչինչ միայն թէ տեսնենք հայրենիքը ազատուած ամեն բըրնութենէ... Իսլամներ, արձնեք ձեռ քունէն եւ ժամ առաջ խորհեցէք ձեր փրկութեան մասին:

«Հայ յեղափոխական շնչակեան ընկերութեան կողմանէ:»

Իսկ գիւղերու ծամբաներու վրայ, դարձեալ նոյն ընկերութեան կողմանէ, ցրուեցան եւ յարմար տեղեր փակցուեցան հետեւեալ յայտարարութեան օրինակները, նորէն թուրքերէն գրուած. —

«Պիւղացի ժողովուրդ,

«Անշուշտ լսած ըլլալու էք հայկական շարժումներու մասին, բայց ձեր կեղծ բարեկամները սխալ կը հասկացնեն ձեզ մեր նպատակը: Դուք ալ ճշուած ու հարստահարուած էք մեզ, հայերուս, նման: Ձեր արդիւնաբերածներու համար ուրոյն-ուրոյն, ծանր, բազմատեսակ հարկեր կառավարութիւնը առնելէ դատ, շահուտուրք ալ կ'առնէ, մինչեւ անգամ հակառակ ձեր անկարողութեան, բուն վաճառելով երբեմն ձեր ունեցածներն, որ բոլորովին անիրաւութիւն է: Դուք այդպէս ճշուելու համար չէ, որ աշխարհ էք եկած. դուք պատրաստելով ձեր, այսինքն ժողովրդի ամենահարկաւոր պէտքերը, պէտք է իրաւունք ալ ունենաք ազատ եւ հանգիստ ապրելու: Երբ մենք, հայերս, շարժումներ կընենք՝ այն հարստահարութեանց պատճառաւ է, որ կառավարութիւնը ի գործ կը դնէ ամեն մի հպատակի վրայ: Որ մը կը հասնենք մեր նպատակին... Պիւղացիներ, ձեր պարտքն է մտածել ձեր վրայ...»

Ճիշդ այս շարժման ժամանակն էր որ քաղաքիս փողոցի մը մէջտեղ պտտող ոստիկանները դառն աղբի մէջ նետած Ղուրան մը: Թիւրքաց մի մասը այդ գործը հայոց վերագրելով՝ սկսաւ գրգռել թիւրք պաշտպաններն հայոց վրայ: Բայց թիւրք հասարակութեան խոհեմ մասը, որ համակիր էր հայոց նախորդ ցրած յայտարարութիւններուն սկսաւ փնտռել թիւրքաց մէջ, եւ գտաւ հեղինակը, որ թուրք մըն էր, եւ յանձնեց կառավարութեան: Նա իբր խենթ ղրկուեցաւ Պոլիս յիմարանոց, իսկ իր զըրդիները, 3 թուրքեր, բանտարկուեցան:

ՈՒՐԱԳ.

Մունճուսուն, 5 յունվար 95.

Այս կողմերու մէջ կատարեալ անիշխանութիւն կը տիրէ. ամբողջ կեսարիան եւ իր չօրհանները թուրք լիտի ոստիկաններու կամքին թողուած են, որոնք իրենց ուզածին պէս կը վարուին հայերու հետ: Մենք ալ բաժին ունեցանք Կեսարիայի հայերուն գլխուն եկած անլուր խժժութիւններէն. շատ նոր հարսերու պատիւներ ընծաբարուեցան, շատերու պարանոցի ոսկիի շարոցները

յափշտակեցին, շատ ընտանիքներու գոյքերը աւարի տը-  
ւին եւ այդ ամենը կը կատարուին սուլթանէն երկրին  
ապահովութեան հսկող կարգուած անկուտի զաւթի-  
ներու կողմէն: Անցեալ դէպքերու շարունակութիւնն լի-  
նելով, ասկէ գրեթէ ամիս մը առաջ, Մանճուսունը  
ենթարկուեցաւ հին սարսափներուն: Նոյեմբեր ամսոյ  
29-ին երեքշաբթի գիշեր եկեղեցւոյ կից Մարգար  
Արսլանեան անուն անձի տունը յանկարծ փոխ-  
ները պաշարելով՝ սկսան խուզարկութեան: Մարգար  
Արսլանեան, Անդրէաս անուն մի վատ հայի մատնու-  
թեամբ, մեղադրուած էր իբր իր տան մէջ պայթուցիկ  
նիւթեր պատրաստող: Մանրակրկիտ խուզարկութենէ վերջ,  
ոչինչ չը կարողացան գտնել բացի երկու հրացաններէ  
եւ մէկ լէվզէրէ: Ոստիկանները ծարահատեալ իրենց  
գործնոցը դարձան եւ իրենց ցորեկուան շահատակու-  
թիւններէն յոգնած անկողին կը մտնեն: Յանկարծ կը  
լսուին հրացաններու ձայներ եւ ողբալի վայնասուններ,  
կառավարութեան ամբողջ շէնքը կրակի էր մատնուած,  
կարծես չար զուգադիպութեամբ այդ հրդեհը կուգար  
հայերուն գլխուն նոր օրիններ խաղալու: Հէնքի մէջ  
գտնուող ութ ոստիկաններն ալ կրակին զոհ գնացին:  
Յայտնի է թէ այս պարագայի տակ որոնք պէտք է մե-  
ղադրուէին... հայերը: Անմիջապէս ձերբակալութիւն  
սկսաւ: Հետեւեալ առտուն կեսարիոյ միւթեսարիֆը եւ  
կաւ հրդեհի վայրը եւ շատ մը հայեր շղթայի վար-  
ներով՝ որոնց իբր պարագլուխ կը համարուէր Մարգար  
Արսլանեանը՝ տարուեցան կեսարիոյ բանտը, անշուշտ  
շատ չարարանքներէ վերջ մահուան դատապարտելու  
համար: Շատ աննախանձելի վիճակ ունինք, իւրաքանչիւ-  
րը նստած կսպասէ թէ արդեօք երբ կուգան իրեն բան-  
տարկելու...

ՃԳՆԱՆՈՐ.

Ան, 25 յունվար 95.

Անանկացած կառավարութիւնը իւր անյատակ դա-  
տարկ քսակը լեցնելու համար, այսպէս թէ այնպէս, ուղ-  
ղակի եւ անուղղակի տուրքերով, կաշառակերութիւննե-  
րով ու կողոպուտներով անլսելի բռնութեանց տակ կը  
ճնշէ հայ ժողով օրը:

Հայի համար եկեղեցիի մէջ հանդարտ կերպով ա-  
ղօթելն անգամ խանգարուած է: Կոշտ զապթիան կը  
յանդգնի եկեղեցւոյ ծոցէն իսկ ձերբակալել հոյը: Չար-  
շին հրապարակը լիքն է բազմութեամբ, զապթիան ամ-  
բոխի մէջէն կը քաշէ ուզած հայը եւ ծեծելով կը տա-  
նի... Ամեն կերպով հոգեւորքի մէջ է ժողովուրդը,  
կը տիրէ մեր երկիրը թանձր խաւար: Քաջբերունիք, Մոկս,  
Հատախ, Ռշտունիք եւ վարձապէս ամբողջ Աստուրա-  
կանը կորաւ գրեթէ... Ժողովուրդը գաղթեց մեծաւ  
մասամբ:

Այս ամեն բան կառավարութեան թելադրութեամբ  
եւ Համիտիէներ քաջալերելէն առաջ կուգայ: Ողորմելի  
կուսակալը ոչինչ ըրած չունի, եթէ ոչ՝ թիւրքերն ու  
քիւրտերը գրգռել ընդդէմ հայոց, հայոց մէջ ցանել  
անմիաբանութեան սերմեր, բանտը լեցնել անմեղ հայե-  
րով եւ զանոնք անասելի չարաշանքներու տակ տան-  
ջել եւ վերջապէս երկիրն ամայացնելու աշխատիլ:

94 հոկտ. 8-ին Վէպիս գաւառի Սնպոն անուն

վանքին կառավարիչ Երեցեան Մանուկ, երբ իրենց գիւ-  
ղացի Հէյիսի պէյի հետ պրակի խնդրով վէճ կունե-  
նան, կառավարութեան դիմելու համար ծամբայ կել-  
լէ: Յիշեալ Հէյիսի պէյը իւր եղբոր որդու հետ ծա-  
նապարհին ասոր դէմը կելլեն եւ խթելով անոր մար-  
մինը շամփուրով կը խորովեն. այսպէս երեք օր իրենց,  
տան մէջ պահելով՝ յետոյ գլխի կաշին կը քերթեն  
եւ վերջն ալ քանի մը շալակ փայտ լեցնելով խեղճ  
Մանուկի վրայ՝ կայրեն...

94, դեկտ. 18-ին Մոկս գաւառի 20 տունէ բաղ-  
կացեալ Սպիտանց գիւղի բնակիչներէն եօթը հոգի, այլ  
եւս չը կրնալով քրդաց անլսելի ոճրագործութեանց եւ  
հարստահարութեանց դիմանալ, կրօնափոխութեան կը  
դիմեն...

95, յունվար 2-ին Ռշտունեաց գաւառացի Կուլի-  
խան պէյի կաթողիկոսի եղբոր հարս փախցնող՝ չարա-  
գործ Եռուստֆ անուն սրիկան, երբ Բախլանց գիւղացի  
ութամեայ Մուրատեան Մարտիրոսին պատուը բռնա-  
բարել կուղէ, այս վերջինս, իբր ապաստանարան հա-  
րեկայ վանքին զպրոցը կը փախչի: Սակայն յիշեալ  
գաղան եւ արխարբու Եռուստֆը իւր պէս քանի մը  
սրիկաներով իրիկուան դէմ վանքը մտնելով՝ ժամեր-  
գութեան միջոցին յիշեալ ութամեայ պատանին եկեղե-  
ցիէն դուրս կը քաշէ եւ վանքի անտեսատունը տա-  
նելով՝ վերջին աստիճանի արբեալ վիճակի մէջ, մինչ  
արշալոյս տղան կը լլկէ՝ համարեա ի ներկայութեան  
ամբողջ ժողովրդին... Կառավարութիւնը անպատճառ  
զինք կը վարձաբեւ...

95, յունվ. 10-ին դարձեալ Մոկս գաւառի Գնե-  
կանց գիւղացի Մանուկեան ուն թուրիկ եւ իր ընկեր  
Ղազար երբ տուրք վճարելու համար պայմանաժամ  
ուղեւու պատճառաւ գայմագամին՝ կը բերուին կարգ մը  
ոստիկաններով, գայմագամը յիշեալ անձերն լաւ մը  
ծեծելէն վերջ փոքր խրճիթի մը մէջ դնել կուտայ  
եւ հոն փութեր (անասունի կղկղանք՝ վառելու համար)  
վառել տալով, այնքան մուխ լեցնել կուտայ ներսը, որ  
երիտասարդները երեք ժամէն վերջ շնչասպառ կը  
մեռնին...

Հանկոյսների տ. Գալուստը բանտի մէջ վախճանե-  
ցաւ: Երեւակայեցէք, ամբողջ հայութիւնը կը հազան-  
գի վատ թիւրքի ու քիւրդի վերջապէս ամենայնոյն  
զապթիէի կամայականութեանց, անբարոյականութեանց  
եւ ամեն կերպ զաղքելի, քստմեղի ու անլսելի ոճրա-  
գործութիւններու...

ՎԱՍՊՈՐԻԱՆՆԵՐ.

Սամսոն, 23—4 յունվար 95.

Անցեալները, շնորհիւ կառավարութեան աջալուծը  
հսկողութեան տեղոյս բանտէն 7 անձեր յաջողեցան  
փախչել. երկուսը հայ էին, մին Յովսէփ եւ միւսը  
Յակոբ օ.ս. այս վերջինս դեռ մէկ ամիս չեղաւ, որ իր  
կամքով անձնատուր եղաւ կառավարութեան: Բանտէն  
կամքով անձնատուր եղաւ, Յովսէփը հանդիպելով Ասպուրախի  
փախչելէն ետքը, Յովսէփը հանդիպելով Ասպուրախի  
կարապետ անուն բաջ երիտասարդին, որ իր հերս-  
սական քաջութիւններով երեւելի դարձած էր եւ փա-  
խառնեան կը պատէր, անոր առաջնորդութեամբ կը հա-  
խառնեան կը պատէր, անոր առաջնորդութեամբ կը հա-

նի մինչեւ եւելի Ըրմագի եղբորը. գետեզերքը մի հաս-  
գիւղացի նաւավարի հետ խօսք կընեն, որ երեկոյեան  
գայ եւ զիրենք միւս եզերքն անցնէ. նաւավարը կը խոս-  
տանայ. երբ երկու երիտասարդները կը մեկնին՝ վատ  
հայը կերթայ կառավարութեան կիմացնէ. ժամագրա-  
վայրը եւ այլ եւս երեւան չի գար: Երեկոյեան երկու  
երիտասարդները կը վերադառնան գետեզերքը եւ ոչ ոք  
չեն գտնիր. կիմանան թէ գաւազրութիւն կայ. կաճա-  
պարեն ետ դառնալ, բայց ահա մարթինիներու որո-  
տումին հետ կը լսուի «Թէսլիմ օլունուզ» (յանձնուե-  
ցէք) ձայնը. գնդակները կարկուտի պէս կը տեղան: Ե-  
րիտասարդները զարատաղ ըէվօլվրէ մը զատ ուրիշ զէնք  
չունէին: Յանկարծ կարապետը կը զարնուի եւ գեռ անձ-  
նատուր չըլլալու համար գետը կը նետուի: Յովսէփը  
տեսնալով այս դժբաղդութիւնը՝ անոր ետեւէն կը հաս-  
նի եւ իր դրկաց մէջ առնելով իր ընկերը կաշխատի  
միւս կողմը անցնիլ եւ գոնէ իր ընկերոջ գիակը ա-  
զատել. բայց սուարիները այդ բանը նկատելով ամեն  
կողմէ վրայ կը հասնին եւ կը ձերբակալեն: Կարապետը  
իր վերքի ծանրութենէն գեռ Զարչամպա չի հասած  
կը մեռնի. իսկ Յովսէփը նորէն կը բերեն Սամսոնի հա-  
յերու ստակով կառուցուած բանտը՝ իր մեղքերը բա-  
ւելու համար:

Տեղս այժմ սաստիկ խտութիւն կայ, ձերբակա-  
լութիւններ անպակաս են. վաճառականութիւնը բոլորո-  
վին վերջացած է. շատերը թողելով հեռացած են, իսկ  
շատերը շուարած մնացած:

Տեղս ձերբակալուած եւ Տրապիզոն տարված բան-  
տարկեալների դատը վերջացաւ. 17 հոգիէն 12-ը ազատ  
արձակուեցան. Ատոմը 15 տարուան, Գ. Վարդուկեանը, Ար-  
մենակը (Ֆիսէնդ) եւ Զարչամպացի Աւետիսը 10 ական  
տարուան, Զարչամպացի Քեհեայի կարապետը 5 տարուան  
բանտարկութեան դատապարտեցին: Ատոմը յատուկ հրա-  
մանով տարուեցաւ Կ. Պոլիս: Ե. Ա. Վ.

Կիլիկիա, 20 յունվար, 95.

Աւ տեղ չի մնաց Կիլիկիայի մէջ, որ հայերը կաս-  
կածելի չըլլան թուրք կառավարութեան առաջ եւ չի  
խուզարկուեն:

Անտիոքի եւ Սէլեւկիայի հայերը, որոնք մինչ ցարդ  
քաղաքական խոր անտարբերութեան մէջ էին, սորա եւս  
վերջերս ենթարկուեցան խիստ հալածանքներու ու խու-  
զարկութիւններու, թրքական շիլ հայեացքի ու անխոհեմ  
ընթացքի պատճառով... Ահա այդ հալածանքներու ան-  
հիմն պատճառները:

Սելեւկիայի Քեհեուէ հայաբնակ գիւղի բնա-  
կիւններէն Սահակի տղայ Գեւորգը որ յայտնի է  
սրիկայութեամբը, հայերու տներու մէջ արած գողութեամբ  
եւ որն արդէն մի քանի անգամ մահապաշտան կրօնն ըն-  
դունած է՝ իր բոլոր հետ եւ ապա կրկին դարձած է, զա-  
տելով իր բոլոր արմատներէն, վերջերս գնաց մատնեց հայա-  
բնակ գիւղերը տաճիկ կառավարութեան:

Մատնութեան պատճառը եղած է անձնական թշնա-  
մութիւնը եւ իր թրքամոլութիւնը:

Անցեալ 94 տարուայ հոկտեմբեր ամսոյ մէջ յիշ-  
եալ մատնիչ Գեորգը կը գողանայ իր գիւղի աղաներէն

մէկի՝ Պալաճի Եուսուֆի նոխազը: Մի քանի շա-  
բաթ վերջ նոխազի տէրը իր անասունը կը գտնէ Փէլ-  
լահներու մօտ, որոնք կը յայտնեն նոխազի ծախողը Սա-  
հակի տղան:

Պալաճի Եուսուֆը յիշեալ սրիկան կը յանձնէ Սէ-  
լեւկիայի Միտիոքին, որը ինքը Մէծիտիյէ տուգանք առ-  
նելէ յետոյ ազատ արձակեց:

Մատնիչ Գեորգը իր վրէժը լուծելու համար, միւս  
կողմէն Պալաճի Եուսուֆի հօրեղբորորդի Պալաճի Գե-  
որգ տղան՝ իր հակառակորդ հայերէն վրէժ լուծելու  
համար, միասին կը պատրաստեն մատնութեան դաւը:

Վալսաւոր գրգռումը կուտան Ղապախիւն գիւղի  
թիւրքերը, որոնք իրենց նուազութեան չը նայելով Մու-  
համետի դարերէն մնացած կրօնամոլ եւ կեաւուններու գէմ  
ուխտեալ թշնամիներ են:

Ղապախիւցիները եւ Պալաճի Գեորգ տղան, գինովու-  
թեան մէջ Սահակի տղայ Գեորգին Անտիոք կուղար-  
կեն, որը երթալով աղերսագիր կուտայ քաղաքացիներին  
եւ միեւնոյն ժամանակ կը հետգրէ Հալէպի կուսակա-  
լութեան, որ ինքը 10-15 ասպատակներ տեսած է ութ  
ամիս առաջ Քեհուէ գիւղէն դուրս քարայրներու մէջ եւ  
թէ երեսմի երբեմն այդ գիւղի մէջ կը տեսնէ եղեր:

Պալաճի Գեորգ տղան, որ կը կարծէր ուրիշ գիւղա-  
ցի հայերը պէտք է ընկնեն, ընդհակառակը, Սահակի տը-  
ղան իր վճարած տուգանքի վրէժը լուծելու համար, կեր-  
թայ կը մատնէ, որ այդ ասպատակներուն առաջնորդը եւ  
կերակրողը Պալաճի Եուսուֆը. գիւղացիներ Ղապա-  
լաղը եւ գիւղի գրագիր Ռսկանն են:

Կառավարութիւնը փոխանակ անցեալներէն խրատ-  
ուելու, թէ մատնողը ի՞նչ աստիճանի մարդ է, մի յիմնա-  
պետ եւ 18 Եսթէրլի (Էսէպլին ջորեւոր զինւոր) ու-  
ղարկեց յիշեալ հայ գիւղերը: 94 դեկտեմբեր 17-ի ի-  
րիկնադէմին կոխեցին Քեհուէ գիւղը զէն ի ձեռին:  
Ամեն կողմեր լսուած լինելով Սասունի կոտորածները, ա-  
ռաւել կամ նուազ ճշգրտութեամբ, ժողովուրդը ամեն բան  
թողելով փախաւ լեռներն ու ձորերը, ազատելով լոկ իրենց  
անձերը, վախենալով որ մի գուցէ մէկ ընդհանուր կո-  
տորած տեղի ունենայ...

Օհնուորները կատաղած, որին որ գտան գիւղին մէջ  
կապեցին, 160 տան մէջ 25-30 տներ աւերեցին: Յիս-  
նապետը տեսնելով որ գիւղացիները ոչ մի ընդդիմութիւն  
չեն գործեր, թոյլ կըտայ ձերբակալածների մի քանիսը  
եւ խորտակելով Պալաճի Եուսուֆի գոնները, կեննեն նրա  
տանը, կը ձերբակալեն սորա 8 տարեկան որդին հօրը տեղ  
որ փախած էր, կը ձերբակալեն նաեւ գիւղացիներ ու  
իր գրագիրը:

Սուրբ Յակոբի այդ ցուրտ եւ սառուցային օրերը,  
խեղճ գիւղացիները լեռը գիշերեցին անօթի եւ առանց  
ծածկոցի, ձիւնին եւ անձրեւին ներքեւ:

Պալաճի Եուսուֆը իր որդին աղատելու համար ըս-  
տիպեալ յանձնուեցաւ կառավարութեան, որ իսկոյն կալա-  
նաւորեց:

Միւս օրը գիւղացիները չի կարողանալով տոկալ  
ցուրտին, անօթութեան, նախամեծար համարեցին գիւղին  
մէջ չարչարուիլ քան թէ դուրսը մեռնիլ:

Օհնուորները այդպէս տեսնելով գիւղացիներու երկ-  
չտուութիւնը, աւելի համարձակ կսկսեն իրենց խժգոն-

Թիւնները ի գործ գնել... ծեծելը, կապելը, հայհոյելը սովորական բաներ էին. ինչոր Թանկագին իրեր, մետաքսեղէն բանուածքներ, մետաքսներ գտնելով իւրացուցին, գոնե՛րն ու զիւղացիի արկղները իրենց ապրանքի պէս կը բանային, իսկ գիւղացիի հաւերն ու այծերը անխղճաբար առատ առատ կը մորթէին ու կուտէին: Յիսնապետը տեսնելով որ եղած մասնութիւնը զրպարտութիւն է, խնդրել դարձուց տուրք հաւաքելուն:

Այս մի սեւ դրամ չի թողեցին խեղճ գիւղացիներու վրայ. ով որ մի քիչ կուշացնէր կամ բողբոջէր անկարող էր վաճարելու, ժամերով եւ օրերով անօթի, ձեռն ու ոտքը կապուած գլուխով անձրեւին ու ձիւնին մէջ... չարիք չի մնաց վերջապէս, որ չի գործէ ին... անկողիներն ու վերմակներն անգամ ծախեցին նոցա՝ որոց ամուսինները չի կ'ըլլին, կ'ընենք բանտարկեցին... լիբը ու վաւաշտ զօրքերի մօտ...

Ղուրսը գիշերած լինելուն, գիւղացիներէն շատերը ծանրապէս հիւանդացան որոց մին Մէլլօսի տղան երկու օր յետոյ մեռաւ:

Եւս յարձակուիմ չեղած տղան շատ քաջաւորջ էր:

Օխուորները՝ մի թաղէ ներս մտած ասեն, Ղապախլը ի սրիկայ տաճիկներէն Պէլալ անուն սրիկայ գողի առաջնորդութեամբ միւս թաղը կը մտնեն եւ ձեռքէ կը մատնենք ստելով մի բանի ունեւորներէն ինչ ճերմակ մէծիտ եւ վեց լիտր թուզ կ'առնեն:

Այլ օր խեղճ քեթուէցիները չարչարելէ յետոյ կալանաւորներն էլ միասին առնելով իջան Եօղու-Օլու գ. հայաբնակ գիւղը, ուր նոյնպէս շատ խժգոնութիւններ արին:

Բայց գլխաւորաբար, սոյն հայաշատ գիւղի գլխին մի օյիւն խաղալու համար, թրքերը կը լարեն մի ուրիշ դաւադրութիւն:

Ղապախլի թրքերը Թիւրայրիէ թրքաբնակ գիւղացիներու հետ միացած աւաղակ 2 էք-2 իւր օսման ի առաջնորդութեամբ, ընդամենը 13-15 հոգի գիւղեր ատեն կը գան Եօղու-Օլու գ. այն բլուրը՝ որի առաջ մի հայի տան մէջ իջեւանած էին զինուորները: Թիւրք աւաղակներու նպատակն է եղեր յարձակիլ զինուորներու վրայ եւ դոցա հաւաքած դրամը կողոպտել եւ հայերու վրայ ձգել պատասխանատուութիւնը: Բարեբաղդաբար, այդ բլուրի կալերի մէջ երկու հայ երիտասարդներ, Գրիգոր Զուրնաճեան եւ Պօղոս Թաղեան, որոնք կըսպասեն եղեր շնագայլ որսալու, կը յարձակին առաջակների վրայ, բայց աւաղակները որպէս դրացի ծանօթ գիւղացիներ, քաղցր խօսելով կը մեղմացնեն հայ երիտասարդները, որպէս թէ իրենք ծխախոտ բերած են եւ մի յաճախորդ կը փնտռեն: Հայ երիտասարդները, վստահելով այդ ծանօթներու միասին կը գնան, որպէսզի ձորի մէջ պահուած ծխախոտը բերեն. բայց խորամանկ թրքերը ձորի մէջ կը խուժեն այդ երկու հայ երիտասարդներու վրայ, սաստիկ կը ծեծեն ու կը կալանաւորեն, բողբոջելով կը մերկացնեն, այնպէս ինչպէս ծնած են իրենց մօրմէն: Երիտասարդները՝ մի քիչ դիմադրած լինելուն աւաղակները երկու ատրճանակ կը պարպեն՝ որոնք վերաւոր կը ձգեն երիտասարդները: Աւաղակները՝ երիտասարդներու զէնքերն ու գոյքերը առնելով կը մեկնին, ընդամենը հաղար դահեկանի արժողութեամբ. կողոպտուող

երիտասարդները մինչեւ առաւօտ ցուրտին տակ կը մնան եւ հազիւ իրենց ոտքի կապերն քակելով կը հասնին գիւղ:

Օխուորները իրենց խժգոնութիւնները բաւ համարելով Եօղու-Օլու գիւղի մէջ գնացին 2 աճի-2 ապիպլի եւս գործադրել. 2 էք-2 իւր օսման այդտեղ եւս գնացեր էր իր ծրագիրն այնտեղ գործադրելու, բայց հայերը ձերբակալեցին զինք եւ յանձնեցին յիսնապետին որ 5 ոսկի առնելով ազատ արձակեց նաեւ Պալալի:

Այլ օր ոսկի առնելով ազատ արձակեց նաեւ Պալալի Եօղու-Օլու գիւղի հետ ձերբակալուած երկու հայերը իսկ եղած մասնութեան յատուկ ոչ մի գործ չի գտնելով զինուորները մեկնեցան մեծ վնասներ հասցնելով արդէն անանկացած գիւղացիներուն...

Թուրք ժողովրդի կատաղութիւնը հայերու դէմ անբացատրելի է. տմեն կողմ հալածանք ու խժգոնութիւն. գողերը շրջապատած են ամեն տեղ. ամենքը որսի ելած են. ոչ օրէնք մնաց, ոչ կանոն. գոխային մի մեքենայ դարձաւ Թիւրքիայի փիճակը...

Ղապախլ գիւղի մէջ 2 էլլա գ-Յալոբի տունը մտնելով տարին երկու եզը եւ երկու աւանակը: Ղուր գ. Տէրէսի մէջ գիւղապետ Պլլօ գի ձին եւս տարին:

Բէսապի մէջ ալ ութը օր առաջ թրքերը կը յարձակին Գէօր գ. անուն մի հայի տանը վրայ, դուրս կը կանչեն եւ նախապէս իր լողին դուրս ելնելով առանց մի խօսք խօսելու կը զարնեն ու կը վիրաւորեն, իսկ հայրը Գէորգը՝ կողորդէ զարնելով կըսպաննեն եւ յետոյ կանհետին:

Եւս կողմերէն զօրքեր կը ժողովն. բողբոջ 2 էլլա թիւն գնացին, քաղաքների մէջ մուսնտիկ կանուեցաւ որ զօրքերը կը գնան «Մարաշի պահպանութեան համար»,... մինչեւ ոչ մի շարժում չեկայ Զէյթինի մէջ... կառավարութիւնը ինքը կուգէ զրդեր, որ լինի այն ինչ որ եղաւ Մասուլի մէջ... կը մաղթեմք աւելի փառաւոր:

Եւսանայի բանտարկեալներէն մօտ հաղար ոսկի կուգեն ազատ արձակելու համար, բայց բանտարկեալները չեն ուզեր վճարել, նախամեծար կը համարեն բանտը:

Հալէպի մէջ Բէյլանցի բանտարկեալները դեռ կը մնան բանտը. այժմ նոցա մասնորները կուգեն Հալէպ:

Երկիրը ամպոտ է եւ որոտալից... Ամօթ նոցա, որոնք դեռ տալուտ եւ անխուսափելի... Ամօթ նոցա, որոնք դեռ այսքան յայտնութիւններու առաջ անտարբեր կը մնան եւ երկչոտ... վերահաս մահի առաջ իսկ ինքնաճանաչութիւնը մեռած է նոցա բով... Բայց պատրաստուինք... անձրեւը ամենքս կը թրջէ...

ՏՈՐՈՍԻ

Կ. Պօլիս, 22 յունվար 95.

Բերա ոճիւններու թատր մը հանդիսացաւ անցած շաբաթուրէն ի վեր. ապահովութիւնը կորաւ, հարուստները կառքով սկսան երթեւեկել իսկ աղքատները ահ ու գողի մէջ են իրենց կեանքի համար:

Սուլթանի հանդերձապետին որդին, որ պաշտօնական սպայ մըն է, անցած հինգշաբթի գիշեր, զաշոյն ի ձեռին Բերայի քրիստոնեայններու վրայ յարձակեցաւ եւ

տասն երեք հոգի վերադարձեց հետզհետե, որոնցմէ մին՝ ամերիկեան հպատակ գերմանացի մը՝ անմիջապէս մեռաւ: Ամբողջ ժամու կէս ալ գազանը, գաշոյն ի ձեռին, Բերայի սարսափը եղաւ եւ ոստիկանութիւնը չը համարձակեցաւ իրեն ձեռք դաշնելու, որովհետեւ ամեն պահականոցէ շուտով ճանչցան հանրածանօթ պալատականը, որ արագ վազքին մէջ շարունակ կաղաղակէր, «քէսէլիմ՝ կեափուրլարը» — կեափուրները սպանները... Վերադարձաներու մեծագոյն մասը հայ են, որոնց մէջ կը գտնուին գեռատի օրիորդներ. վեց տարեկան յոյն տղէկ մըն ալ բաժին ստացած է ոճրագործին դաշոյնէն: Թուրք կառավարութիւնը իր ստահակի հանրածանօթ անամօթութեամբ խնդիրը ծածկեց եւ հետեւեալ օրը Զաֆրանպօլի խեղճ յիսնապետ մը ստեղծեց, որու վրայ ծանրացուց ոճրին ամեն պատասխանատուութիւնը: Գերմանական «Օսմանիէ բօսթ» լրագիրը, որ բուն մարդասպանին անունը համարձակած էր տալ՝ դադարման դատաւարտուեցաւ, եւ այս կիրակի օր, հանգերձապետը եւ իր բարի պտուղ որդին բաց կառքի մէջ, քով քովի նստած, հանգիստոր պտոյտներ կատարեցին Բերայի մեծ պողոտայի վրայ, իրր կենդանի հայհոյանք մը քաղաքակիրթ աշխարհին...

Ահա այս դէպքին հետեւեալ օրն իսկ, երկու թուրք զինուորներ, սուսերամերկ Բերայի շէնտէկ փողոցը անցորդներուն վրայ յարձակեցան, աղաղակելով «քէսէլիմ՝ կեափուրլարը»: Այս անգամ ոստիկանութիւնը միջամտեց որովհետեւ ասոնք «պալատականներ» ըլլալու բախդաւորութիւնը չունէին... Ուրիշ զօրքեր, խմած վիճակի մէջ, յունարէն «Կէօլօղոս» լրագրի խմբագրատան վրայ յարձակեցան եւ սպաննալիք ըրին խմբագրապետին, խմբագրատան մէջ գտնուողները յաջողեցան զինաթափ ընել զանոնք եւ սաստիկ տիտց մը քաշել: Հետեւեալ օրը «Կէօլօղոսի» արտօնատիրոջ աղբարարուեցաւ որ հաւանակ շարժած է եւ խստիւ պիտի պատժուի, եթէ ընթացքը կրկնէ... Թուրք կառավարութիւնը այս աղբարարութեամբ ըսել կուզէ թէ «Կէօլօղոս» ձեռքբերը խաչածեւ նստելու էր թուրք սուսերամերկ զօրքերուն առջեւ եւ թող տալու էր, որ անոնք հանդարտ կերպով զինքը ապանէին, կեցցէ պաշտպօղուք կառավարութիւնը...:

Այս կիրակի գիշեր, (22 յունվար) յոյն երիտասարդ մը, որ քէֆալօնիացի էր եւ ցոյէրթ Գօլէճի ուսանող, իր քրոջը հետ թատրոն գնացած էր. թուրք զինուորական մը իր քրոջը անպատիւ խօսքեր ուղղեց, որու վրայ երիտասարդը գաւաղանի հարուած մը իջեցուց զինուորականի. այս վերջինը լսեց, բայց երբ թատրոնէն դուրս կնիւէին՝ երիտասարդին հետեւեցաւ եւ վատաբար անոր կոնակին վեցհարուածեան մը պարպելով, անկենդան փռեց գետին...

Մագսուտ Սիմօն Պէյը թիֆլիսէ բռնուելով սկիւտա տկարանալ եւ անոր կողքը խրուած Հնչակեանի գնդակը աւելի ծանապարհ գտնելով, առաջացաւ եւ պէշիմաշը փութացուց:

Թուրք հայրենասէր երիտասարդներու խումբը անցած չարթու յայտարարութիւն մը փակցուց Եննի ճամփի պատերուն վրայ, սա իմաստով թէ «Սուլթանը երկիրը կործանման ճանքուն մէջ դրած է, եւ կոչում կը լինի բոլոր

հայրենասէրներուն որ միանան եւ իրենց բոլոր ուժովը այսպիսի քայքայման մը եւ դաժալէժ անկումի մը առաջընն առնեն, տապալելով աւազակներու այս զղուելի որջը որ կառավարութիւն կը կոչուի, եւ անոր տեղ կարգելով այնպիսի տարր մը, որ կարող ըլլայ ամեն կերպով բարեկարգել երկիրը եւ արդարութիւն ու իրաւունք ի գործ դնել բոլոր բնակիչներուն համար անխտիր:» Ո՞վ կարող է չը համարիլ այսպիսի ձեռնարկի մը, եւ մենք առաջինը պիտի ըլլանք, որ աջակցութեան ձեռք պիտի կարկառենք մեր թուրք եղբայրներուն, իրենց հանրօգուտ ձեռնարկին մէջ:

Այս բոլոր դէպքերը շղթայաբար տեղի կունենան ի Ս. Պօլիս, կարելի չէ չի մտածել թէ, Եւրօպայի տէրութիւնը փոխանակ քննիչներ զրկելու ի Սասուն, կոնային պարզապէս պատուիրել իրենց Բերայի գեապաններուն՝ աչքերնին բանալ եւ իրենց շուրջը գտնուածները եւ անցած դարձածները դիտել. այսչափ իսկ պիտի բաւէր ամեն ինչ ճշդիւ երեւան հանելու, զի այս դէպքերը շատ յատկանշանական են:

\*

Անէն մեղ կը հաղորդեն թէ Փիրղալէմեանի փեսայ Մհի. Զարութիւն, 30 տարեկան, թուիս դէմքով եւ լայն ճակատով, օսմ. կառավարութեան կողմէ վարձուելով յունվարի սկիզբը Կովկաս ուղեւորեւ է՝ կաթողիկոսի կնանքին դէմ դաւաճանելու նպատակով: Այս լուրը վերապահութեամբ իմացնելով հանդերձ, պարտք կը համարինք զգուշացնել կովկասցիները յիշեալ անձի դէմ:

Կոյն քաղաքէն մեզ հասած թղթակցութենէ մը կիմանանք նաեւ թէ, տեղւոյն կուսակալը Պահրի բաշան, միանալով մատնիչ Պօղոս եպիսկոպոսին հետ, հայ մեծամեծներուն վրայ ճնշում կը բանեցնեն եղեր ստորագրելու համար հանրագիր մը սա իմաստով, թէ տեղւոյս անգլիական հիւպատոսը եւ ամերիկացի միսիօնար-բժիշկը յիմար մարդիկ են եւ իրենց գլխաւոր գործը եղած է ժողովրդին մէջ երկպառակութիւն ցանկելու հանրային անդորրութիւնը խանգարել... Այլահ խելքը աւելացնէ վալի բաշան ու զառամեալ Պօղոս եպիսկոպոսին:

Անցածներ 500 ի չափ դպրոցականներ, սուլթանի անձնական ծախքով իրենց տեղերը զրկուեցան, ոմանք ալ արքայութեան:

Յեղափոխական կամ փախստական ձեւացած կարգ մը ինքզինքնին սասունցի կամ գէթութունցի անուան տակ ծախող լոտեսներ կան, որոնք ժողովրդի մէջ մտնելով զայն խաբել կուզեն. մենք մեր պարտքը կը համարենք նախազգուշացնել ժողովուրդը, որ այսպիսիներու թակարդին մէջ չկնան:

ԿԼՅԻՆ:

Զօրութեան թղթակցութիւններ, տեղեկութիւններ եւ դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —

Londres. (Angleterre). — M: Beniard. Poste restante